ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2026/2

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«03» մարտի 2026 թվական քաղ. Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով Լուիզա Սարգսյանի, Տիգրան Ծատուրյանի և Ռուզաննա Առաքելյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման Հավելվածի 11-րդ կետով, ***որոշեց.***

1. հաստատել կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի մասին հայտարարությունը՝ համաձայն Հավելվածի:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Լուիզա Սարգսյան

Հավելված

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Սույն Հայտարարությունը հաստատված է Մրցութային հանձնաժողովի «2026/2» որոշմամբ

Բաց մրցույթի ծածկագրերը՝ ԿՏՀԲՄԾ-2026/3, ԿՏՀԲՄԾ-2026/4, ԿՏՀԲՄԾ-2026/5 և ԿՏՀԲՄԾ-2026/6

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) հայտարարում է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝

1. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության,
2. «Վերածնվող Հայաստան» կուսակցության,
3. «Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցության,
4. «Հայաստանի Հանրապետական» կուսակցության

2025 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով:

Մրցույթի իրականացման կարգը և պայմանները սահմանվում են «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով:

Մրցույթին մասնակցելու համար աուդիտորական կազմակերպություններին ներկայացվող պահանջները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 3-ով:

Մրցույթին մասնակցելու սահմանափակումները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 4-ով:

Մրցութային առաջարկների պատրաստման և ներկայացման կարգը, ներկայացման ժամկետը, ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 6-ով:

Մրցույթին մասնակցելու համար դիմումի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 2-ով:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացման շրջանակները սահմանվում են Որոշման Հավելվածի Գլուխ 10-ով:

Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին կառաջարկվի կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր: Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի արժեքը կազմում է՝

N	**Մրցույթի ծածկագիր**	**Կուսակցության անվանում**	**Պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)**
1	ԿՏՀԲՄԾ-2026/3	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	2,400,000
2	ԿՏՀԲՄԾ-2026/4	«Վերածնվող Հայաստան» կուսակցություն	1,470,000
3	ԿՏՀԲՄԾ-2026/5	«Հայ յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն	3,780,000
4	ԿՏՀԲՄԾ-2026/6	«Հայաստանի Հանրապետական» կուսակցություն	4,320,000

Աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը սահմանվում է Որոշման Հավելվածի Ձև 5-ով:

Սույն հայտարարությունը կազմվել է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածի, Որոշման և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մրցույթի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Մրցույթի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Մրցութային առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեով, թղթային ձևով, մինչև ***2026 թվականի մարտի 18-ը ներառյալ՝ ժամը 11:00-ն:***

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերենով:

Մրցութային առաջարկների բացումը տեղի կունենա ***ՀՀ, Երևան, Կորյունի փողոց 15*** հասցեում, ***2026 թվականի մարտի 18-ին՝ ժամը 11:00-ին:***

Աուդիտորական ծառայությունները պետք է մատուցվեն, իսկ աուդիտորական եզրակացությունը պետք է ներկայացվի մինչև սույն թվականի ***ապրիլի 30-ը***:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Լուիզա Սարգսյան

Մրցութային հանձնաժողովի անդամներ՝ Տիգրան Ծատուրյան

Ռուզաննա Առաքելյան